Սերգեյ Դովլաթով

Մերոնք

4

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Դաստիարակությունս վաղ մանկությունից քաղաքականապես հավակնոտ է եղել: Մայրս, օրինակ, խորը քամահրանք էր տածում Ստալինի նկատմամբ: Ավելին՝ հաճույքով ու հրապարակավ արտահայտում էր իր զգացմունքները: Ճիշտ է՝ յուրօրինակ մոտեցմամբ: Նա պնդում էր .

— Վրացին չի կարող կարգին մարդ լինել:

Նա սովորել էր Թբիլիսյան հայկական թաղամասում: Այնտեղ էր մեծացել:

Հայրս, հակառակը, պատկառանքով էր վերաբերվում առաջնորդին: Թեեւ հայրս էր, որ ծանրակշիռ պատճառներ ուներ Ստալինին ատելու համար: Հատկապես պապիս գնդակահարելուց հետո:

Հայրս գուցեեւ ատում էր բռնատիրությունը: Սակայն հարգանք էր տածում դրա ընդգրկման չափերի հանդեպ:

Մի խոսքով՝ այն, որ Ստալինը մարդասպան էր, ծնողներից քաջ հայտնի էր: Ծնողներիս ընկերներին նույնպես: Տանը միայն այդ մասին էին խոսում:

Ես մի բան չեմ կարողանում հասկանալ: Ինչո՞ւ իմ սովորական ծնողները գիտեին, իսկ Էրենբուրգը՝ ոչ:

Վեց տարեկանում ես գիտեի, որ Ստալինը սպանել է պապիս: Իսկ դպրոցն ավարտելիս գիտեի բացարձակապես ամեն ինչ:

Գիտեի, որ թերթերը ստում են: Որ արտասահմանում սովորական մարդիկ ավելի հարուստ ու ուրախ են ապրում: Որ կոմունիստ լինելն ամոթ է, բայց՝ ձեռնտու:

Դա ամենեւին չի նշանակում, թե ես խորամիտ պատանի էի: Ավելի շուտ՝ հակառակը: Պարզապես այդ մասին ինձ ասել էին ծնողներս: Ավելի ճիշտ՝ մայրս:

Հայրս ինձ գրեթե չի դաստիարակել: Առավել եւս, որ շատ վաղ բաժանվել էր մորիցս:

Ապրում էին մի զազրելի կոմունալ բնակարանում: Երկար, մշուշոտ միջանցքը մետաֆիզիկորեն ավարտվում էր զուգարանով: Պատի հեռախոսի շուրջը պաստառները ամբողջովին խզբզած էին . դա կոմունալ ենթագիտակցության տխուր ժամանակագրությունն էր:

Միայնակ մայր Զոյա Սվիստունովան դաշտային ծաղիկներ էր պատկերում:

Կենսասեր ինժեներ Գորդեյ Բորիսովիչ Օվսյաննիկովը ջանադիր ու հաստ գծերով պատկերում էր կանացի հետույքներ: Տեխնիկ Խարինը՝ շշեր ու բաժակներ: Էստրադային երգչուհի Ժուռավլյովայի վերարտադրած սոլի բանալիները ականջ էին հիշեցնում:

Ես նկարում էի ատրճանակներ ու սրեր... Մեր բնակարանը հազիվ թե կարելի էր տիպիկ անվանել: Բնակեցված էր հիմնականում մտավորականությամբ: Կռիվներ չէին լինում: Միմյանց ապուրի մեջ չէինք թքում: (Թեև վստահ չեմ): Չի նշանակում, թե այստեղ տիրում էր հավերժ խաղաղություն ու բարօրություն: Քողարկված պատերազմը երբեք չէր մարում: Փոխգրգռվածությամբ լի կաթսան մեղմ կրակի վրա էր ու անձայն բլթում էր...

Մայրս սրբագրիչ էր, աշխատում էր երեք հերթափոխով: Երբեմն ուշ էր պառկում, երբեմն՝ շուտ: Երբեմն ցերեկն էր քնում: Միջանցքում վազում էին երեխաները: Ահագնացունց դոփում էին Տիխոմիրովի զինվորական սապոգները: Անհաջողակ Խարինը քարշ էր տալիս իր հեծանիվը: Համերգի էր պատրաստվում Ժուռավլյովան:

Մայրս քունը չէր առնում: Իսկ աշխատանքը պատասխանատու էր: (Այն էլ՝ Ստալինի օրոք): Ցանկացած վրիպակի համար կարելի էր բանտ ընկնել:

Լրագրողական գործում մի օրինաչափություն կա: Բավական է գեթ մեկ տառասխալ՝ վերջ: Անպայման գռեհկություն կստացվի, կամ ավելի վատ՝ հակասովետիզմ: (Իսկ երբեմն՝ երկուսը միասին):

Օրինակ, վերնագիր է՝ «Քաղղեկի հրամանը»: Վրիպում է անպայման առաջին բառի երրորդ տառը և ստացվում է «Քաքղեկի հրամանը»:

Օրինակները բազմաթիվ են: Մեր թերթերում, ինչպես հայտնի է, միայն վրիպակներն են ճշմարիտ:

Վերջին քսան տարիներին դրանց համար արդեն չեն գնդակահարում: Մայրս սրբագրիչ է եղել երեսուն տարի առաջ:

Մայրս ծնվել է Թբիլիսիում: Մանկության տարիներին երաժշտությամբ է զբաղվել: Մի ռուս տիկին ձրի պարապել է հետը:

Կյանքն ուրախ էր: Նախ՝ հարավ էր: Եվ ապա՝ ընտանիքում չորս երեխա կար:

Մառա քույրը չարաճճի էր ու խելացի: Անելյա քույրը՝ չար ու կամակոր:

Ռոմա եղբայրը՝ կռվարար ու խուլիգան: Ամենասովորական երեխան մայրս է եղել . . .

Շոպենհաուերը գրել է, թե մարդիկ ամբողջ կյանքում չեն փոխվում:

Հապա ինչպե՞ս եղավ, որ Մառա մորաքույրս վերածվեց անողոք գրաքննադատի:

Եվ ամենասովորական մարդ դարձավ կռվարար խուլիգան Ռոման քեռիս:

Ինչպե՞ս եղավ, որ կամակոր Անելյան վերածվեց ամենաբարի, ազնվագույն ու համեստ պահանջմունքների տեր անձնավորության: Այնքան անթերի, որ նրա մասին գրելն անգամ ձանձրալի է . . .

Իսկ մայրս ապրում է կապիտալիստական ջունգլիում, կարդում է «Էխո» ու հանրախանություն անօգնականությունից անցնում է վրացերենի:

Մորս երիտասարդության մասին քիչ գիտեմ: Երեսնական թվականներին քույրերը հեռանում են Վրաստանից: Հիմավորվում են Լենինգրադում:

Անելյա մորաքույրս աշխատում է հրատարակչությունում:

Մայրս փաստաթղթերը հանձնում է կոնսերվատորիա: Ջուգահեռ նաեւ՝ թատերական ինստիտուտ: Քննությունները հանձնում է միաժամանակ: (Այն ժամանակ կարելի էր): Եվ ընդունվում է երկու տեղում էլ: Մայրս ասում է, որ այն ժամանակ բոլորին ընդունում էին: Ձեւավորում էին նոր ապադասակարգային մտավորականություն:

Մայրս ընտրում է թատերական ինստիտուտը: Կարծում եմ՝ իզուր:

Առհասարակ հարկավոր է խուսափել ստեղծագործական մասնագիտություններից: Եթե չես կարող խուսափել, դա ուրիշ հարց է: Ուրեմն ելք չկա: Ուրեմն ոչ թե դու ես ընտրել մասնագիտությունդ, այլ մասնագիտությունդ է ընտրել քեզ . . .

Մի քանի տարի մայրս աշխատել է թատրոնում: Կարդացածս հատուկենտ գրախոսություններում նրան գովում են:

Կոլեկտիվում էլ, ինչպես ասում են, հարգանք էր վայելում: Դերասան Բեռնացկին, օրինակ, ասում էր .

— Դոնաթին մի լավ ծեծ է հասնում . . . Բայց Նորկան մեղք է . . .

Դոնաթը հայրս է: Նա արձագանքում էր այսպես .

— Ժենյա Բեռնացկու դեմքով մարդիկ չպետք է տնից դուրս գան...

Հետո ծնվեցի ես: Հայրս ու մայրս հաճախ վիճում էին: Հետո բաժանվեցին: Իսկ ես մնացի: Հյուրախաղերը մորս համար վերջացան: Ու մայրս թողեց թատրոնը:

Եվ ճիշտ արեց: Ես հետևել եմ մինչև կյանքի վերջը թատրոնին հավատարիմ մնացած նրա ծանոթների կյանքին: Դա խոցված ինքնասիրությունների, ոտնահարված հավակնությունների, գործընկերոջ խաղի անվերջ փնովումների աշխարհ է: Նրանք թշվառ, քինոտ ու նախանձ մարդիկ էին...

Մայրս դարձավ սրբագրիչ: Եվ հրաշալի սրբագրիչ: Հավանաբար այդ գծով տաղանդ ուներ: Որովհետև քերականություն բոլորովին չգիտեր: Փոխարենը սրբագրչի հոտառություն աներ: Այդպես երբեմն պատահում է:

Իմ կարծիքով, նա սրբագրիչ էր ի ծնե: Նա, եթե կարելի է այդպես ասել, ուղղագրության էթիկական զգացողություն ուներ: Որևէ մեկի մասին, օրինակ, կարող էր ասել.

— Գիտե՞ս որ մարդկանցից է: Ովքեր «նախագահն» առանց «հ»–ի են գրում...

Ինչը հավասարազոր էր բարոյական ծայրագույն անկման: Դատարկ, թեթևամիտ, բայց համակրելի մարդու մասին ասվում էր.

— «Արդյոք»–ը «ի»–ով...

Մայրս օր ու գիշեր աշխատում էր: Ես չափազանց շատ էի ուտում, աճող օրգանիզմ էի: Մայրս սնվում էր հիմնականում կարտոֆիլով: Մինչև տասնյոթ տարեկանս միանգամայն համոզված էի, որ մայրս միայն կարտոֆիլ է սիրում: (Այստեղ՝ Նյու Յորքում, վերջնականապես պարզվեց, որ այդպես չէ...):

Մեր բնակարանը անհետաքրքիր էր, թեև՝ մարդաշատ: Իրադարձությունները խիստ հազվադեպ էին:

Մի անգամ գնդապետ Տիխոմիրովի մոտ անսպասելիորեն եկավ հեռու ազգականներից մեկը՝ ոմն Սուչկով: Բռնազբոս շարժուձևով հաղթանդամ երիտասարդ էր Դուլևո գյուղից:

— Քեռի, — ասել էր Սուչկովը դեռ շեմին, — նյութական օժանդակություն ցուցաբերեք երեք ռուբլու չափով: Թե չէ կգնամ սխալ ճանապարհով...

— Մի սխալ արդեն թույլ տվեցիր, — արտահայտվել էր Տիխոմիրովը, — քանի որ փող ես ուզում: Ես փող չունեմ: Այնպես որ դրանից ձեռք քաշիր . . .

Զարմիկը նստել էր կոմունալ սնդուկին ու լաց եղել: Այդպես մնացել էր մինչեւ ճաշ:

Ի վերջո, մայրս ասել էր .

— Ներս անցեք: Դուք երեւի քաղցած եք:

— Վաղուց, — անմիջապես հաստատել էր Սուչկովը:

Մնաց մեզ մոտ: Անվերջ ուտում էր ու զբոսնում քաղաքում: Երեկոները թեյ էր խմում ու հեռուստացույց նայում: Հեռուստացույց առաջին անգամ էր տեսնում:

Գնդապետ Տիխոմիրովը չեզոք կեցվածք էր ընդունել: Միայն դադարել էր բարեւել մորս:

Վերջապես մայրս հարցնում է .

— Վոլոդյա, ի՞նչ ծրագիր ունես:

Սուչկովը հոգոցով ասում է .

— Եթե կարողանայի փող ճարել դասագրքերի համար . . . Ու վառելափայտի . . . Սովորել եմ ուզում, — եզրափակում է երիտասարդ

Լոմոնոսովի՝ ուսման ծարավ ձայնով ու անմիջապես ավելացնում, — Թե չէ, Աստված չանի, կգնամ սխալ ճանապարհով:

Մայրս հարեւանուհուց պարտքով տասնհինգ ռուբլի վերցրեց: Սուչկովի համար գնացքի տոմս առավ:

Մեկնելուց քառասուն րոպե առաջ Վոլոդյան թեյ խնդրեց:

Խմում էր բաժակ բաժակի հետեւից, եռման ջրում լուծելով շաքարի աներեւակայելի քանակություն: Կարծես ուզում էր ցմրուր վայելել շրջակա աշխարհի անսպասելի բարեհաճությունը:

— Տես, չուշանաս, — տագնապած ասում էր մայրս:

Սուչկովը թերթով չորացնում էր դեմքը՝ անընդհատ կրկնելով .

— Ինչ-որ շատ եմ ծարավ: Անվերջ ջուր եմ ուզում . . .

Մայրս չդիմացավ .

— Դե գնա գետում խեղդվիր:

Ուրիշի ազգականը մոայլվեց: Կշտամբալի հայացքն ուղղեց մորս:

Լարված լռություն տիրեց .

— Ինչ մանրախնդիրն եք, Նոննա Ստեփանովնա, — ասաց ապագա Լոմոնոսովը, խեղաթյուրելով անուն-հայրանունն ու փաստերը . . .

Այդպես էլ ապրում էինք:

Ու միշտ վշտացնում էի մորս:

Սկզբում վատ էի սովորում: Վատ ու բազմազան: Այսինքն՝ երբեմն անսպասելիորեն դառնում էի որևէ շրջանային քիմիական օլիմպիադայի մասնակից: Իսկ հետո՝ կրկին համատարած «երկու»–ներ: Նույնիսկ

գրականությունից:

Հիսունչորս թվականին դարձա պատանի բանաստեղծների համամիութենական մրցույթի հաղթող: Հաղթողներս երեքն էինք՝ Լյոնյա Դյատլովը, Սաշա Մակարովը և ես: Հետագայում Լյոնյա Դյատլովը հարբեցող դարձավ: Մակարովը թարգմանություններ է անում կոմի լեզվից: Իսկ ես հայտնի էլ չէ, թե ինչով եմ զբաղվում: Բայց այն ժամանակ մենք դափնեկիրներ էինք: Մրցանակները մեզ հանձնեց Սամուիլ Յակովլևիչ Մարշակը:

Մրցույթը մնաց հետևում: Կրկին ծայր առան «երկու»–ները: Ընդ որում՝ ոչ թե ազատամտության, այլ բթության համար: Անաստված կերպով արտագրում էի պարզունակ դասարանային աշխատանքները: Իսկ «Երիտասարդ գվարդիան» մինչև օրս չեմ կարդացել: (Եվ արդեն երբեք չեմ կարդա...):

Կարճ ասած՝ վատ էի սովորում: Ընկերություն էի անում դպրոցական թափթփուկների հետ: Ավելին՝ ծխում էի, երբեմն նաև՝ խմում:

Համալսարանում էլ վատ եմ սովորել: Փոխարենը մորս միշտ սպառնում էի, թե կամուսնանամ: Այն էլ՝ ում հետ ասես...

Հետո ինձ բանակ տարան:

Բանակում էլ վատ եմ ծառայել: Կտրիճ-կորովի զինվոր այդպես էլ չդարձա:

Հետո ինձ զորացրեցին:

Սկսեցի աշխատել բազմատիրաժ թերթերում: Անվերջ աշխատանք էի փոխում: Հավելումն՝ պատմվածքներ սկսեցի գրել:

Պատմվածքներս, բնականաբար, չէին տպագրում: Սկսեցի ավելի շատ խմել: Չճանաչված հանճարի դիմակը մի տեսակ դյուրին էր դարձնում գոյությունս:

Ընկերներս էլ համապատասխան էին: Մորուքավոր, ներփակ ու մռայլ: Հետն էլ՝ զուգարանից հետո ձեռքները չէին լվանում: Մինչդեռ մայրս այդ առումով շատ խիստ էր: Թերևս ավելի խիստ, քան ուղղագրության հարցում:

Եթե ընկերս գնում էր զուգարան, մայրս անշարժանում էր: Թափվող ջրի ձայնով որոշում էր, լվանում է ձեռքերը, թե ոչ: Մայրս կանգնում ու լսում էր: Սկզբում լուռ էր լինում: Հետո հզոր հոսքով թափվում էր բաքի ջուրը: Ու անմիջապես բացվում էր դուռը՝ ուրեմն չի լվացվել . . .

Մայրս շփոթված ժպտում ու իրար էր անցնում .

— Երեւի օճառն է վերջացել: Մաքուր սրբիչ տա՞մ:

Ուղղորդող հարցեր էր տալիս: Համառորեն ընկերոջս մղում էր մաքրակենցաղության:

Ընկերս պատասխանում էր .

— Մի անհանգստացեք: Ամեն ինչ կարգին է . . .

Քչերն էին զարմացած հոնքերը վեր բարձրացնում:

Իսկ եթե ընկերս մի փոքր ավելի երկար էր մնում, եթե բաքից թափվող ջրի ձայնին հետեւում էր ծորակի ջրի կարկաչյունը, մայրս գոհունակությամբ ժպտում էր: Ականջները սրած փորձում էր լսել սրբիչի խշշոցը:

Այդպիսի հյուրսին սուրճ էր առաջարկում . . .

Ընկերներիս էլ չէին տպագրում: Նրանք ցավոտ ու բարձրագոչ էին արձագանքում դրան: Թունդ գինի էին խմում ու միմյանց հանճար համարում: Հանճարեղ էին գրեթե բոլոր ընկերներս: Կային այնպիսիք, որ հանճարեց էին միաժամանակ մի քանի բնագավառներում: Սաշա Կոնդրատովը, օրինակ, հանճար էր մաթեմատիկայի, լեզվաբանության, պոեզիայի, ֆիզիկայի եւ կրկեսային արվեստի բնագավառներում: Ճկույթին կրում էր ինքնաշեն անագե մատանի՝ վրան գանգ . . .

Մայրս համակրում էր ընկերներիս, կերակրում էր նրանց: Համբերությամբ լսում էր նրանց անզուսպ ինքնագովաբանությունը:

Նա ամբոխի դեր էր կատարում: (Ի՞նչ հանճար առանց ամբոխի, առանց խուժանի . . .): Նա դիտմամբ միամիտ հարցեր էր տալիս: Դրանք լեփ-լեցուն դահլիճից հնչող բացականչություններ էին:

— Ասացեք, Պաուստովսկին տաղանդավո՞ր է, — հետաքրքրվում էր նա:

— Պաուստովսկի՞ն: Աղբ է, — ակադեմիական ոճով արձագանքում էր զրուցակիցը:

— Իսկ Կատաեւը:

— Կատարյալ աղբ:

76 թվականին իմ պատմվածքներից երեքը հրատարակվեցին Արեւմուտքում: Խորհրդային հրատարակչություններն ընդմիշտ փակվեցին ինձ համար: (Մինչեւ այդ էլ առանձնապես բաց չէին):

Միաժամանակ հպարտ ու վախեցած էի:

Ընկերներիս արձագանքը միանշանակ չէր: Ոմանք նախազգուշացնում էին.

— Քեզ կբանտարկեն, կտեսնես: Քրեական գործ կսարքեն գլխիդ ու կնստեցնեն:

Մյուսներն արտահայտվում էին այսպես.

— Տպեցին, հետո՞ ինչ: Տպաքանակներն Արևմուտքում չնչին են: Այնտեղ քեզ չեն նկատի:

— Իսկ այստեղ բոլոր ճանապարհները կփակեն:

Ոմանք կարծես դատապարտում էին.

— Գրողը պետք է հայրենիքում հրատարակվի:

Եվ միայն մայրս էր անդադար կրկնում.

— Անչափ ուրախ եմ, որ քեզ վերջապես տպագրում են...

Դրանից հետո սկսեցին տհաճ իրադարձություններ տեղի ունենալ: Ինձ վռնդեցին բոլոր տեղերից: Զրկեցին անգամ չնչին խալտուրայից:

Պահակություն էի անում ինչ-որ հիմար լաստանավի վրա. այդտեղից էլ վռնդեցին:

Սկսեցի շատ խմել: Կինս ու դուստրս մեկնեցին Արևմուտք: Մնացինք երկուսով: Ավելի ճիշտ՝ երեքով: Մայրս, ես ու Գլաշա անունով շունը:

Իսկական որս էին սկսել: Մեղադրվեցի քրեական օրենսգրքի երեք հոդվածներով միաժամանակ՝ պորտաբուծության, իշխանություններին չհնազանդվելու, «այլ սառը զենք» կրելու մեջ:

Բոլոր երեք մեղադրանքներն էլ փուչ էին:

Միլիցիան մեզ մոտ հայտնվում էր գրեթե ամեն օր:

Ես որոշեցի պաշտպանական միջոցներ ձեռնարկել:

Ապրում էինք հինգերորդ հարկում՝ առանց վերելակի: Դիմացի շենքի իր պատուհանի մոտ առավոտից երեկո նստում էր Գենա Սախնոն: Հարբեցող դարձած նախկին լրագրող էր և, ինչպես հարբեցողներից շատերը՝ շլացուցիչ վեհանձնության տեր մարդ: Օրեր շարունակ պորտվեյն էր խմում լուսամուտի մոտ:

Եթե միլիցիան մոտենում էր մեր մուտքին, Գենան վերցնում էր լսափողը:

— Բոզերը գալիս են, — տեղեկացնում էր լակոնիկ: Անմիջապես դուռը կողպում էի սողնակով:

Միլիցիան ձեռնունայն հեռանում էր: Գենան ստանում էր ազնվորեն վաստակած ռուբլին:

Այդպես էլ ապրում էինք:

Մայրս անդադար կրկնում էր .

— Անչափ ուրախ եմ, որ քեզ վերջապես տպագրում են . . .

Հետո ինձ անսպասելիորեն նստեցրին՝ Կալյաեւյան բանտ: Մանրամասները չեմ ուզում շարադարել: Կասեմ միայն, որ բանտը չհավանեցի:

Առաջ ասում էի ավագ եղբորս .

— Դու ճամբարում նստել ես . . . Ես ճամբարում ծառայել եմ . . . Ի՞նչ տարբերություն: Նույն բանն է . . .

Հիմա հասկացա: Նույն բանը չէ: Իսկ մանրամասները շարադրել չեմ ուզում . . .

Հետո ինձ անսպասելիորեն բաց թողեցին: Եվ առաջարկեցին մեկնել: Համաձայնեցի:

Մորս չեմ էլ հարցրել, ուզո՞ւմ է մեկնել, թե՞ ոչ: Ապշել էի, երբ իմացա, որ կան ընտանիքներ, որտեղ այդ հարցը տեւականորեն քննարկվում ու ողբերգական լուծումներ է ստանում:

Գլաշայի հետ կապված էլ խնդիրներ չառաջացան: Փող մուծեցինք: Երկեւ ռուբլի վաթսուն կոպեկ՝ յուրաքանչյուր կիլոգրամի համար: Գլաշային մի փոքր ավելի թանկ էին գնահատել, քան խոզի միսը: Եվ զգալիորեն ավելի էժան, քան թառափը . . .

Հիմա Նյու Յորքում ենք: Եվ այլեւս չենք բաժանվի: Առաջ էլ չէինք բաժանվում: Նույնիսկ երբ ես երկար ժամանակով մեկնում էի . . .

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Հայրս միշտ սիրել է ուշադրության կենտրոնում լինել: Դրա համար էլ դերասան դարձավ:

Կյանքն իրեն ներկայանում էր որպես մի վիթխարի թատերականացված ներկայացում: Ստալինը հիշեցնում էր շեքսպիրյան չարագործներին: Ժողովուրդը լուռ էր, ինչպես «Գոդունով»–ում: Դա ոչ կատակերգություն էր, ոչ էլ ողբերգություն, այլ՝ դրամա: Բարին վերջին հաշվով հաղթում էր չարին: Ստոր մղումները հակակշռվում էին վեհ կրքերով: Ուրախությունն ու վիշտը նույն լուծն էին քաշում: Գլխավոր հերոսը հայտնվում էր բարձունքում:

Գլխավոր հերոսը ինքն էր:

Հայրս, իմ կարծիքով, ընդունակություններ ուներ: Նա քառյակներ էր երգում՝ միանգամայն զուրկ լինելով երաժշտական լսողությունից: Պարում էր՝ լինելով անճոռնի շարժուձևով հրեա պատանի: Կարող էր խիզախ մարդու պես պահել իրեն: Ներկայացնել ասածը հենց դա է...

Վլադիվոստոկը թատերական քաղաք էր, ինչպես Օդեսան: Քաղաքային զբոսայգիներում աֆրիկյան երաժշտություն էր հնչում: Կենտրոնական փողոցով՝ Սվետլանկայով, ճեմում էին պճնված երիտասարդներ՝ թունավոր-կանաչ տաբատներով: Սրճարաններում քննարկում էին վերջին ինքնասպանությունը անպատասխան սիրո հողի վրա...

Իսահակ պապս թատերական անձնավորություն էր: Նախկին գվարդիական, հաղթամարմին ու քեֆչի պապս թեթև արհամարհանքով էր վերաբերում որդիներին: Նրանցից մեկը բանաստեղծություններ էր գրում: Երկրորդը խաղում էր բեմում: Ամենագործարարն ու պրակտիկը կրտսերն էր՝ Լեոպոլդը: Տասնութ տարեկանում նա ընդմիշտ փախավ տնից:

Բանաստեղծություններ գրում էր նաև հայրս: Խոսքը դրանցում մահվան ձգողականության մասին էր: Դա, ըստ իս, կենսական ուժերի ավելցուկի դրսևորում էր: Ոտանավորները նրան հրապուրում էին որպես թատերական ներկայացման տարր:

Նա հրապուրվեց նաև թենիսով: Թենիսիստները գեղեցիկ մարզահագուստ էին կրում: Հաշիվը վարվում էր անգլերեն...

Ինչպես գավառական պատանիներից շատերը, հայրս ու իր եղբայրները նույնպես ձգտում էին ապրել մայրաքաղաքներում: Միխայիլը մեկնեց Լենինգրադ՝ կատարելագործելու բանաստեղծական շնորհը: Դոնաթը հետեւեց նրան: Գործունյա Լեոպոլդը հայտնվեց Շանհայում:

Հայրս ընդունվեց թատերական ինստիտուտ: Որպես նոր մտավորականության ներկայացուցիչ, բավական արագ ավարտեց այն: Դարձավ ռեժիսոր: Ամեն բան լավ էր:

Նրան ընդունեցին ակադեմիական թատրոն: Աշխատել է Վիվյենի, Տոլուբեւի, Չերկասովի, Ադաշեւսկու հետ:

Ես տեսել եմ նաեւ Մեյերխոլդի ներկայացումների բացասական գրախոսությունները: Դրանք գրվել են գրեթե նույն տարիներին:

Հետո եկան տագնապալի ժամանակներ: Անակնկալ սկսեցին անհետանալ ծնողներիս ընկերները:

Մայրս անիծում էր Ստալինին: Հայրս այլ կերպ էր դատում: Անհետանում էին, ախր, ամենասովորական մարդիկ: Եվ յուրքանչյուրը, արժանիքների կողքին, ուներ նաեւ շոշափելի թերություններ: Յուրաքանչյուրի մեջ, եթե լավ տնտղեիր, բացասականն էլ առկա էր: Իսկ դա հնարավորություն էր ընձեռում համակերպվել կորստին:

Երբ տանում էին մեզանից մի հարկ ներքեւ ապրող խմբավար Լյալինին, հայրս հիշեց, որ Լյալինը հակասեմիթ էր: Երբ ձերբակալում էին բանասեր Ռոգինսկուն, պարզվեց, որ Ռոգինսկին խմում էր: Համերգավար Զացեպինը անբարեկիրթ էր կանանց հանդեպ: Դիմահարդար Սիդելնիկովը առհասարակ տղամարդկանց էր գերադասում: Իսկ կինոդրամատուրք Շապիրոն, հրեա լինելով հանդերձ, չափազանց հպարտ կեցվածք ուներ:

Այսինքն տեղի էր ունենում մի դրամա, ուր արատը պատժվում էր:

Հետո ձերբակալեցին պապիս՝ հենց այնպես: Հորս համար դա միանգամայն անսպասելի էր: Քանզի պապս ակնհայտորեն լավ մարդ էր:

Պապս, անշուշտ, ուներ թերություններ, բայց՝ քիչ: Այն էլ՝ բացառապես անձնական բնույթի: Նա շատ էր ուտում . . .

Դրաման վերաճում էր ողբերգության: Հայրս իրեն կորցրեց: Նա հասկացավ, որ մահը շրջում է մոտերքում: Որ գլխավոր հերոսին վտանգ է սպառնում: Ինչպես Շեքսպիրի ողբերգություններում:

Հորս վռնդեցին թատրոնից: Ինչպե՞ս չվռնդեին իր իսկ մշակած տեսությամբ: Հրեա, հորը գնդակահարել են, կրտսեր եղբայրը արտասահմանում է և այլն:

Հայրս սկսեց գրել էստրադայի համար: Հորինում էր ֆելիետոններ, քառյակներ, երգիծական մանրապատումներ, ինտերմեդիաներ: Դարձավ արհեստավարժ երգիծաբան՝ առավոտից երեկո կատակներ էր հորինում: Իսկ այդ զբաղմունքը, ինչպես հայտնի է, մարդուն իսպառ զրկում է լավատեսությունից:

Նրա երգիծական մի քառյակը հիշում եմ մինչև օրս.

Մեր սելմագի վարիչը
Ցլիկի պես կտրիճ է,
Արդեն տասը տարի կա,
Որ սելմագում միս չկա...

Հորս հարցրի, թե դա ի՞նչ է նշանակում: Ինչպե՞ս են կապված հասկացությունները այդ խենթ քառատողում:

Հայրս բարկացավ ու բացականչեց ողբերգականորեն բարձր ձայնով.

— Դու էությունը չես տեսնում: Դու պարզապես զուրկ ես հումորի զգացումից...

Ընկավ, սակայն, մտքերի մեջ: Մի քառասուն րոպեով առանձնացավ: Այնուհետև հանդիսավորությամբ հնչեցրեց երկրորդ տարբերակը.

Վարիչը մեր սելմագի

Նման է առողջ բողկի,
Արդեն տասը տարի կա,
Որ սելմագում բողկ չկա...

— Ո՞նց է, — հարցրեց:

— Բողկ վաճառում են ամեն քայլափոխի, — ասաց մայրս:

— Հետո՞ ինչ:

— Հետո այն, որ կենսական չէ:

— Ի՞նչը կենսական չէ: Կոնկրետ ի՞նչը կենսական չէ:

— Դե այն, որ «սելմագում բողկ չկա»: Գոնե տավարի նրբերշիկի մասին գրեիր:

Հայրս բռնեց գլուխն ու գոռաց .

— Ի՞նչ կապ ունի այստեղ նրբերշիկը: Ես ձեզ համար տանտիրուհի՞ եմ: Ձեր գոեհիկ կյանքը ինձ ամենեւին չի հետաքրքրում . . .

«Կենսական չէ . . . », — հեգնանքով կրկնեց հայրս՝ փակվելով իր աշխատասենյակում . . .

Ես գիտեի, որ թաքուն լիրիկական բանաստեղծություններ է գրում: Քսան տարի հետո կարդացի դրանք: Ցավոք, չհավանեցի:

Նրա էստրադային կատակները շատ ավելի լավն էին: Օրինակ, բեմ է դուրս գալիս համերգավարն ու հայտարարում .

— Այժմ Ռուբինա Քալանթարյանը կկատարի «Ալ ծաղիկը» մեքսիկական երգը: Բովանդակությունն այսպիսին է: Խուանիտոն ինձ ալ ծաղիկ նվիրեց: Ես աղքատ եմ, ասաց Խուանիտոն, ու չեմ կարող քեզ մարգարտե մանյակ նվիրել: Այս ծաղիկը գոնե վերցրու . . . Խուանիտո, ասացի ես, քո նվիրածը շատ ավելին է, քան մարգարտե մանյակը: Դու քո սերն ես ինձ նվիրել . . . Եվ այսպես՝ Ռուբինա Քալանթարյան: Մեքսիկական երգ «Ալ ծաղիկը»: Երգը կատարվում է

ՌՈՒՍԵՐԵՆ . . .

Դահլիճում, լավ հիշում եմ, ծիծաղում էին . . .

Հայրս ռոմանտիկ արտաքին ուներ: Նրա դեմքը չհիմնավորված, ավելորդ կերպով ներկայացուցչական էր: Իր տարիքից երիտասարդ էր երեւում, բավական բարեկազմ էր: Այդուհանդերձ, Գորկու «հատակի» բնակիչներից էր: Հիշեցնում էր միաժամանակ Պուշկինին ու ամերիկյան գործազուրկի:

Հայրս, անշուշտ, խմում էր: Մյուսներից, թերեւս, ոչ ավել: Բայց՝ մի տեսակ նկատելի: Կարճ ասած, նրան հարբեցող էին համարում: Իզուր: Սթափ վիճակում նրա խաղը փոքր-ինչ վրդովում էր հանդիսատեսին . . .

Հայրս բառախաղեր ու կատակներ էր հորինում: Մայրս հումորի զգացում ուներ: (Հեռավորությունը նույնն էր, ինչ հացթուխի ու սովյալի միջեւ): Այդ աստիճան տարբեր մարդիկ, միանգամայն պարզ է, չեն կարող գոյակցել:

Ինչպես բոլոր թեթեւամիտ տղամարդիկ, հայրս էլ բարեհոգի մարդ էր: Մայրս անզուսպ էր ու կտրուկ: Նրա կատարյալ ազնվությունը բացառում էր որեւէ զիջում: Նրա ցանկացած արարք ինքնազոհողության բնույթ էր կրում: Մորս բարոյական առաքինության անողոք լույսը աղետալի կերպով ի ցույց էր դնում հորս թերությունները:

Նրանք բաժանվեցին, երբ ես ութ տարեկան էի . . .

Եվ այսպես՝ անհատի պաշտամունք, պատերազմ, էվակուացիա: Հետո՝ ապահարզան, խալտուրա, կանայք... Արվեստի պալատի ռեստորան...

Նրան միշտ շրջապատել են մի տեսակ աններկայանալի անձնավորություններ: Թեև ինքը միանգամայն օրինավոր մարդ էր: Իսկ փողային հարաբերություններում պարզապես բծախնդիր էր:

Ինձ դուր էր գալիս նրա մեծահոգությունը մարդկանց նկատմամբ: Հորս թատրոնից հեռացրած մարդուն մայրս ատում է մինչև օրս: Իսկ հայրս ժամանակ առ ժամանակ բարեկամաբար խմում էր հետը...

Տարիներն անցնում էին: Որդին մեծացավ: Առաջնորդին դիմակազերծեցին: Պապին արդարացրին, ինչպես ասում են՝ «հանցակազմի բացակայության պատճառով»:

Հայրս կրկին ոգևորվեց: Նրան թվաց, թե սկսվել է կյանքի դրամայի երրորդ, եզրափակիչ արարը: Եվ բարին վերջապես հաղթելու է: Կարելի է ասել՝ արդեն հաղթել է...

Հայրս կրկին ամուսնացավ: Նրան սիրեց մի երիտասարդ կին-տեխնիկ: Հնարավոր է, որ հորս հանճարեղ խենթի տեղ էր դրել: Այդպես երբեմն պատահում է..

Կարճ ասած, ամեն բան կարգավորվում էր: Ներկայացումը վերագտնում էր կորցրած թափը: Վերականգնվում էին դասակարգային դրամայի խախտված կանոնները:

Եվ ի՞նչ: Առանձնապես ոչինչ: Երկիրը ղեկավարում էին անհասկանալի, անհատականությունից զուրկ առաջնորդներ: Արվեստում տիրում էր մռայլերանգ, անգույն միաբանության մթնոլորտը:

Մարդկանց, կարծես թե, չէին գնդակահարում: Նույնիսկ՝ չէին բանտարկում: Այսինքն բանտարկում էին, բայց հազվադեպ: Ընդ որում, իրականում գործած արարքների համար: Կամ գոնե՝ հրապարակային անզգույշ արտահայտությունների համար: Մի խոսքով, առաջվա պես չէր...

Այդուհանդերձ Ստալինի օրոք ավելի լավ էր: Ստալինի օրոք գիրքը տպագրում էին, հետո հեղինակին գնդակահարում: Հիմա գրողներին չեն գնդակահարում: Գրքեր չեն տպագրում: Հրեական թատրոնները չեն փակում: Այդպիսիք պարզապես չկան...

Ստալինի ժառանգորդները հուսախաբ արին հորս: Նրանք զուրկ էին վեհությունից, փայլից, թատերականությունից: Հայրս պատրաստ էր հաշտվել բռնատիրության հետ, բայց արևելյան՝ գունեղ ու փոքր-ինչ վայրենի բռնատիրության:

Հայրս համոզված էր, որ Ստալինին իզուր թաղեցին: Նրան չէր կարելի թաղել իբրեւ սովորական մահկանացուի: Չէր կարելի գրել նրա հիվանդության մասին, ուղեղի կաթվածի մասին: Միանգամայն անթույլատրելի էր հրապարակել մեզի անալիզը:

Հարկավոր էր հայտարարել, որ Ստալինը համբարձվել է: Կամ պարզապես անհետացել է: Բոլորը կհավատային: Իսկ մեծ առասպելը կշարունակեր ապրել: Ինչո՞վ է Ստալինը վատ այդ նազարեթցուց . . .

Կյանքն ավելի ու ավելի դժգույն ու միօրինակ էր դառնում: Չարագործությունն ամեն առօրեական, տարտամ բնույթ էր կրում: Բարին վերաճում էր անմասնության: Լավ մարդկանց մասին ասում էին՝ մատնիչ չի . . .

Ես չեմ հիշում, որ կյանքը լրջորեն հետաքրքրեր հորս: Նրան հետաքրքրում էր թատրոնը: Հորս խոսքերի, արարքների, մտքերի կուտակումների հետեւում հազիվ, բայց նշմարվում էր մաքուր, անհեթեթ հոգի:

Հիշում եմ նրա զրույցը գրող Մինչկովսկու հետ: Մինչկովսկին խմել-գլուխը տաքացրել էր: Ասաց .

— Դոնաթ, ես, պատկերացրու, լրտու եմ եղել:

Հայրս վրդովվեց .

— Քեզ այլեւս չեմ բարեւի:

Մինչկովսկին բացատրեց .

— Ես լավ մարդկանց չեմ մատնել: Միայն վատերին:

Հայրս մի պահ մտածեց ու ասաց .

— Իսկ քեզ, Արկադի, ո՞վ էր դատավոր կարգել: Ի՞նչ ասել է՝ լավ մարդիկ, վատ մարդիկ: Ի՞նչ իրավունքով էիր հենց դու որոշում: Դու ինչ է՝ Քրիստո՞ս ես . . (Այս վերջին արտահայտության համար, վստահ եմ, հորս մի օր արժանին

հատուցելու են):

Մինչկովսկին կրկին բացատրեց .

— Վատերը նրանք են, ովքեր ընկերներին չեն հյուրասիրում . . . Ովքեր մենակ են խմում . . .

— Այդ դեպքում դեռ ոչինչ, — ասաց հայրս:

Այդ տարիներին նա, եթե չեմ սխալվում, անգամ դոցենտ էր երաժշտական ուսումնարանում, որտեղ իր նախաձեռնությամբ էստրադային արվեստի դասարան էր բացվել:

Դասավանդում էր այնտեղ: Ուսանողներին անվանում էր աշակերտ: Պյութագորեսի նման . . .

Աշակերտները նրան սիրում էին դեմոկրատիզմի համար:

Սակայն մթնոլորտն այս ուսումնական հաստատությունում բավական նողկալի էր: Մանկավարժներից մեկը մատնություն գրեց: Ասվում էր, թե հայրս այլասերում է ուսանողներին: Նրանց հետ ռեստորան է գնում: Սիրահետում է երիտասարդ աղջիկներին: Եվ այլն: Մատնությունն անստորագիր էր:

Հորս հրավիրում են տնօրենի մոտ: Ցույց են տալիս չարաբաստիկ փաստաթուղթը: Հայրս վերցնում է խոշորացույցն ու ասում.

— Թույլ կտա՞ք նայել: Թույլ են տալիս:

Խոնարհվում է թղթվի վրա: Քիչ անց ցածրաձայն սկսում է.

— Այսպես... Մեծատառերը սեղմումով է գրել... Շագանականեր է... «Բ»–ից հետո տեղ է թողնում... Նեղաչք է... Շրջանագիծը չի փակում... Շատ է ծխում... «Ռ»–ն միացնում է «Ե»–ին... Քառասուներեք համարի կոշիկ է հագնում... Լավ... «Դ»–ի գլխին գծիկ է դնում... Բեղավոր է... Գծերն ընդհատ են...Շուրկա Բոգուսլավսկին է...

Հայրս տեղից ելնում ու հանդիսավորությամբ հայտարարում է.

— Սա գրել է Շուրիկ Բոգուսլավսկին:

Մատնիչին դիմակազերծում են: Հորս ձեռնարկած ձեռագրաբանական հետազոտությունը փայլուն արդյունք է տալիս: Բոգուսլավսկին խոստովանում է:

Ժողով են կազմակերպում: Հայրս ժողովում ասում է.

— Շուրա: Ալեքսանդր Բորիսովիչ: Ինչպե՞ս դու՝ կուսակցության անդամդ, կարողացար այդպիսի բան անել:

Ավելի ուշ հորս ասացի.

— Այն, որ Բոգուսլավսկին կոմունիստ է, միանգամայն տրամաբանական է: Հենց դա է տրամաբանական ու բնական...

Հայրս, սակայն, շարունակում էր տխուր վրդովվել.

— Կոմունիստ... Կուսակցության անդամ... Վստահությամբ օժտված մարդ...

Հայրս տառապում էր իրական կյանքի խորացած ու համառ անհասկացողությամբ...

Իրադարձությունները, մինչդեռ, մշուշոտ զարգացում ունեցան: Ինձ տպագրեցին արտասահմանում: Հորս դուստրը սիրեց սիոնիստ Լյոնյային: Նորապսակները պատրաստվում էին մեկնել երկրից: Ես դեգերում է բանտի ու Փարիզի միջև...

Հորս ի վերջո վռնդեցին աշխատանքից:

— Հրաշալի է, — ասացի, — միասին կմեկնենք:

— Ո՞ւր:

— Ի՞նչ տարբերություն: Կապիտալիստական ջունգլի:

— Եվ ի՞նչ ենք անելու այնտեղ:

— Ոչինչ: Ծերանալու ենք . . .

Հայրս համարյա բարկացավ: Ինչպե՞ս կարելի է՝ բեմից հեռանալ երրորդ արարո՞ւմ: Ծափահարություններից երեք րոպե առա՞ջ . . .

Ի՞նչ ասեի: Որ մենք բեմ չենք, այլ պարտե՞ր: Որ ընդմիջո՞ւմ է: Որ այդ ընդմիջումը կարող է ձգվել մինչեւ սուրբ գալստյան օ՞րը . . .

(Հայրս, երեւի, չգիտեր, թե ինչ ասել է սուրբ գալստյան օր . . .):

Սկզբում մեկնեցին կինս ու դուստրս: Հետո՝ քույրացուս ու Լյոնյան: Նրացից հետո՝ ես, մայրս ու շունը . . .

Մեկ տարի անց Ամերիկա եկավ հայրս: Բնակվեց Նյու Ջերսիում: Բինգո է խաղում: Ամեն բան կարգին է: Ծափահարող հանդիսատեսը առայժմ չի երեւում . . .

Ինձ գեթ մի բան է անհանգստացնում . . . Ոչ թե անհանգստացնում, այլ գուցե զարմացնում . . . Կարճ ասաց, կինս առիթը բաց չի թողնում . . . Եթե ինչ-որ իրադարձություն է կամ գրական հավաք . . . Մի խոսքով, ինչ էլ անեմ, կինս միշտ ասում է .

— Աստված իմ, ինչ նման ես հորդ . . .